ջացեալ դարձ արասցեն ի մշտատարած գիրկս նորա, և զամենայն ծէսս, զխորհուրդս, զարարողութիւնս ի վերայ նոցա կատարել անթերի՝ ըստ աւանդութեանց Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, և զանուանս նոցա յայտնել մեզ, զի և մեք մխիթարեսցուք զնոսա Հայրապետական մերով ներողամտութեամբ և օրհնութեամբ»։

ԳԼՈՒԽ ԺԹ. *Երես* 135 . . . Առանձին միաբանութիւն ճանաչուելուց քիչ յետոյ ըստ առաջարկութեան Թառայեանց, կազմուեցաւ մի ընդհանուր վաճառականական ձեռնարկութիւն, որի համար ըստ յորդորանաց նոյն Թառայեանց՝ միաբան եղբայրներից շատերը մէջ բերին իրենց ունեցած դրամագլուխը, նաեւ կանանց ոսկեղէն զարդերը՝ իբրեւ ճշմարիտ քրիստոնէին անվայել շռայլութեան նիւթեր, և այլ թանկագին ունեցուածներ, այս ամենից գոյացած ընդհանուր դրամագլուխը առաւել քան 15000 ռուբլի, հաւատացին Թառայեանց, որոնք հայրական խնամքոի յանձն էին առնում Մոսկվայից և Մակարեւսկից մթերել ամենայն հարկաւորուած վաճառք և Շամախում ծախելուց յետոյ հասուցանել իւրաքանչիւրին իւր մասնակցութեան չափով շահը, կամ թէ ցանկացած ապրանքը։ Սակայն Թառայեանք հաւատարիմ չմնացին իրանց յանձն առած գործի մէջ, որից զգալի վնասներ ու կորուստներ յառաջացան շատ շատերի համար։

Ահա այս էր պատճառը բողոքականների ներքին զժտութեանց։ Կորուստ կրողները շատ կարելի է, որ իսկոյն թողնէին հեռանային միաբանութիւնից, եթէ որ նոցա չ'կապէր այսօր կամ վաղն իրանց վնասների փոխարէն ստանալու յոյսն և եթէ կաշկանդուած չ՞լինէին զանազան հիւսուածներով։

147. Գրիգոր Գէորգեան — Յակովբեան — Ակլկուտուզեան, Մալաթիացի՝ միեւնոյն շրջիկ քարոզիչն է, որ ներկայումս (1886) գտնուում է Շամախում և որի մասին քիչ առաջ ծանօթութիւն տուի փոքր ի շատէ։ Տերես 145»։

Այս քարոզիչ Գրիգորը կար և մեր ժամանակը ց1891, որ